

ԱԼՈՅ ԶՈՒՄԱՐ



ԶՈՒՄԱՐ

ՏԵՂԵԿԱԾՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺԴ ՏԱՐԻ ԹԲԻ 115 ՅՈՒՆԻՒ-ՕԳՈՍՏՈՒ 2016



ԻՄ ԴՎՅԱՎԱՏՎԱՆ

«ԱՄԲՈՒԴՄԱՆ» ՄԻՋԱՀԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՏՆՈՐԷՆԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ

Չորեքշաբթի՝ 2016 թւականի յուլիսի 20-ին, Ս. Ամենափրկեան Վանք այցելեց «Ամբուդման» միջազգային հաստատութեան եւ Նամիբիայի նոյնանուն հաստատութեան տնօրէն դկտ. Զոն Վալթերզը. սույն հաստատութիւնը, որին անդամակցում են աշխարհի առաւել քան 170 երկրներ, ի շարս նրանց իրանի Խալամական Հանրապետութիւնը, վերահասու է լինում պետական եւ գործադիր մարմիններից եղած ժողովրդական գանգատներին:



Պրճ. Վալթերզին ընկերակցում էին Իրանի Քննչական Ընդհանուր Կազմակերպութեան միջազգային կապի եւ համագործակցութեան բաժնի տեղակալ դկտ. Մանսուր Աղամոհամմադին, նոյն կազմակերպութեան տնօրէնի մշակութային եւ հասարակական բաժնի տեղակալ պրճ. Եղանդին, երկրի եւ նահանգի մակարդակներով մի շարք գործակատարներ եւ պետական այլեր:

Պատվիրակութեանը դիմաւորեցին Թեմական եւ Կրօնական խորհուրդների անդամները: Միասնաբար այցելեցին Ս. Ամենափրկեան Վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր Կեսարացի»-ի անան թանգարան, որտեղ պատվիրակութեանը մանրամասն տեղեկութիւններ փոխանցեց Հայոց ցեղասպանութիւն վերաբերեալ, ինչը ամբողջովին նորութիւն էր դկտ. Վալթերզի համար:



Ապա Ազգային առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում ծանօթացման եւ հիւրընկալման հանդիպում տեղի ունեցաւ: Ընթացքում

դկտ. Աղամոհամմադին ներկայացուեց պատվիրակութեան անդամներին եւ դկտ. Զոն Վալթերզի Իրան այցելութեան նպատակը, որից յետոյ Թեմական Խորհրդի ատենապետ պրճ. Վրէժ Տէր-Մարտիրոսեանը ընդհանուր բացատրութիւն տվեց Սպահանի Հայոց Թեմի կացութեան վերաբերեալ եւ ցանկացաւ որ դկտ. Վալթերզը հաւատարիմ թարգմանը հանդիսանայ Իրանում տիրող կացութեան մասին՝ առ այն որ անկ է:

Արտայայտեց նաև դատաւոր Եաղութին, տեղեկութիւններ փոխանցելով երկրի Քննչական Ընդհանուր Կազմակերպութեան պարտականութիւնների եւ գործունեութեան ձեւի վերաբերեալ:



Դկտ. Վալթերզը հարցումներ ուղղեց հիւրընկալող կազմի անդամներին՝ Իրանի Խալամական Հանրապետութիւնում հայութեան մարդկային իրաւունքների կապակցութեամբ, պարզելով, որ ամավերչի իր գեկոյցում, որը ներկայացելու է Թայանում տեղի ունենալիք զանազան երկրների «Ամբուդման» հաստատութիւնների միջազգային համաժողովին, ներառելու է Իրանում կրօնական փոքրամասնութիւնների վերաբերեալ տեղեկութիւններ: Պրճ. Տէր-Մարտիրոսեանը համապարփակ տեղեկութիւններ փոխանցեց հայ համայնքի իրավիճակի վերաբերեալ, շեշտելով, որ նրանք իրենց մուտուլման հայրենակիցների հետ համահաւատար իրաւունքներ ունեն:

Թեմական Խորհրդի անդամ դկտ. Վաշիկ Հայրապետեանը յաւելեալ տեղեկութիւններ փոխանցեց յարգելի հիւրին Սպահանում ապրող այլ կրօնական եւ ազգային փոքրամասնութիւնների վերաբերեալ, ընդգծելով, որ դարերի ընթացքում համակեցութեան գեղեցիկ պատկեր է ձեւադրած այս քաղաքի մէջ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍԻԱԾ ԲԱՀՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԻՄՆՈՐԴՎՆԵՔ

Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի նախաձեռնութեամբ երիտասարդ ընտանիքների համար կառուցող բազմաբնակարան համալիրի շինարարական աշխատանքն սրբնաց կերպով շարունակում է:



Հինգշաբթի՝ 28 յուլիսի առաւատեան ժամը 10:30-ին, Աերկայութեամբ Սպահան քաղաքի 5-րդ շրջանի քաղաքապետ պրն. Ֆառիհանգի եւ նրա օգնական պրն. Հովհանիսի, Սպահանի հայոց թեմի Պատգամատրական Ժողովի, Թեմական ու Կրօնական խորհուրդների Աերկայացուցիչների, հայ շինարարների եւ համայնքի անդամների տեղի ունեցաւ շինութեան հիմնորհները՝ ձեռամբ արժն. Տ.

Մեսրոպ աւ. քին. Գալստանեանի եւ արժն. Տ. Խաչատրութ քին. Զարգարեանի:



Հիմնորհների ընթացքում շէճի հիմքերից մէկի յատակում տեղադրւեց արարողութեամբ օրինած մի հիմնաքար, որի վրայ արձանագրւած էր «Աստուած օրինի այս տունը». քահանայ հայրը աղօթքով Բարձրեալից հայցեց, որ հաստատուն հիմքերի վրայ անսասան պահի այդ շինութիւնը եւ ուժ ու իմաստութիւն շնորհի կառուցողներին, որպէսզի իրենց աշխատանքը յաջողութեամբ աւարտին հասցնեն:

Վերջում Աերկաները վայելեցին համեստ հիւրասիրութիւնը:

ՆԻՐԱՏԻՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՏԱԿԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ



Համաձայն հանգուցեալ Ցովհաննես Ցովհաննեսիու (Զունիկ)՝ հարազատ-ընկերների ցանկութեան, ըստ որի իր մահան տարելիցի առթով յիշեալի ֆոնդից նիւթական օժանդակութիւն ցուցաբերի Ասրիլեան քառօրեայ պատերազմում զոհած մի նահատակի ընտանիքի, Կրօնական Խորհուրդս առաջնորդ Սրբազն հօր հետ համախորհուրդ նպատակայարմար գտաւ յիշեալի անունից 1000 ԱՄՆ դոլար նվիրել նահատակ՝ Հրաշեայ Մուլադեանի այրուն եւ զաւակներին:

2016 թւականի յունիս 28-ին

Կրօնական Խորհրդի ատենապետը համուխալով նահատակ Հրաշեայ Մուլադեանի մօր եւ այրուն, Ցովհաննես Ցովհաննեսիու անունից փոխանցեց գումարը նաեւ Թեմիս Ք. Դ. Խորհրդի նվիրած ոսկէ խաչ եւ «Նարեկ» աղօթգիրքը:

Ցիշատակն արդարողն օրինութեամբ եղիցի:

ՄԵՐ ՏԻՐՈՁ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻ Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ՝ ՓԵՐԻՈՅ ԳԱՒԱՌԻ ԲՈԼՈՐԱՆ ԳԻՒՂՈՒՄ

Մեր Տիրոջ Պայծառակերպութեան տօնը (Վարդապառ) Ս. եւ անմահ Պատարագի մատուցմամբ նշեց կիրակի՝ յուլիսի 3-ի առաւոտեան, Փերիոյ գաւառի հայարճնակ Բոլորան գիւղի Ս. Ղուկաս եկեղեցում, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերապ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գումանեանի նախագահութեամբ: Օրու պատարագին էր արժն. Տ. Խաչատուր քին. Զարգարեանը իսկ ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկան Ս. Ամենափրկչեան վաճքի «Կոմիտաս» երգչախմբի անդամները:



Հոգեպարար արարողութեանը ներկայ էին Բոլորան գիւղի հայ համայնքի անդամները եւ տօնը նշելու նպատակով գիւղում կեցութիւն հաստատած՝ Նոր Զուղայից, Շահինշահրից, Թեհրանից եւ այլ շրջաններից ժամանած ժողովուրդ:



Յընթացս Ս. Պատարագի, յաւուր պատշաճի քարոզեց գերապ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գումանեանը, ով անդ-

րադանալով Քրիստոսի պայծառակերպութեանը եւ յատկապէս մէջբերումներ կատարելով պատկան աւտարանական դրագներից՝ բացատրութեամբ հանդէս եկաւ տօնի խորհրդի կապակցութեամբ, ապա ընդգծելով, թէ Վարդապառի խորհուրդը հեթանոսական շրջանից մեզ հասած չուր ցանելու սովորութիւնը չէ, աւելացրեց, որ այն Քրիստոսի լուսաւորումն է մեզանից իւրաքանչիւրի սրտում ու հոգում. պայծառակերպութիւնը հրաւեր է Տիրոջ կողմից, որպէսզի մարդը լուսաւորի իր միտքը, սիրտն ու հոգին:

Հայր Սուլբան իր խօսքի շարունակութեան մէջ նշելով, որ մերօրեայ պայմաններում մարդկանց մէջ պակասել է սէրը, յարգանքն ու վստահութիւնը միմեանց նկատմամբ, լիարժէք երշանկութիւն եւ առողջութիւն ունենալու համար յորդորեց՝ բոլոր ժամանակներում փնտուել Քրիստոսին եւ վստահել Նրան: Այնուհետև գնահատելով Բոլորան գիւղի Ս. Ղուկաս եկեղեցու վարչութեանը՝ եկեղեցին բարեկարգ վիճակում պահելու եւ պատարագիչ Քահանայ Հօրը, դպրաց դասին ու երգչախմբին՝ հոգեպարար արարողութեան մատուցման առթիւ, յատկապէս իր մեծագոյն գնահատականներն ուղղեց հաւատացեալ ժողովրդին՝ իր ներկայութեամբ եկեղեցին առաւել պայծառացնելու համար:



Վերջում հոծ ներկաները պատարգիչ Քահանայ Հօր ձեռամբ ստացան Ս. Հաղորդութիւն, ապա բնութեան գրկում շարունակեցին տօնի նշումը:

Պայծառակերպութեան տօնի առթիւ Ս. եւ անմահ Պատարագ մատուցեց նաեւ Նոր Զուղայի Ս. Մինաս եկեղեցում ձեռամբ արժն. Տ. Վարդան քին. Աղարաբյանի:



Ս. ԱՍՏԻԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ՝ ԽՈՅԳԱՆ ԳԻՒՂԻ ԵՒ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Հայ առաքելական սուրբ եկեղեցու հինգ տաղաւար տօներից Ս. Աստիածածին Վերափոխման տօնը (Խաղողօրհնեքք) նշեց Փերիա գաւառի Խոյգան գիւղի եւ Նոր Զուղայի եկեղեցիներում:



Այս առիթով ուրբաթ՝ օգոստոսի 12-ի առաւոտեան, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Խոյգան գիւղի Ս. Աստիածածին, իսկ կիրակի՝ օգոստոսի 14-ի առաւոտեան, Նոր Զուղայի Ս. Յովիկանու եւ Ս. Աստիածածին եկեղեցիներում:

Խոյգանի Ս. Աստիածածին եկեղեցում պատարագեց ու յաւուր պատշաճ քարոզեց արժն. Տ. Սահակ քին. Մինասեանը. Նոր Զուղայի Ս. Յովիկանու եկեղեցում պատարագեց արժն. Տ. Վարդան քին. Աղաբարձիւանը եւ օրևան պատշաճ քարոզով հանդէս եկաւ արժն. Տ. Վազգէն քին. Քեօշկէրեանը, իսկ Նոր Զուղայի Ս. Աստիածածին եկեղեցու պատարագիչն ու քա-

րոզիչն էր արժն. Տ. Մեսրոպ ար. քին. Գալստանեանը:



Հոգեպարար արարողութեան աւարտին իւրաքանչիւր եկեղեցում քահանայ հայրերի միջոցով կատարեց աւանդական Խաղողօրհնեքքի կարգը, որից յետոյ օրինակ խաղողների կապոցները բաժանեցին ներկաներին:

Խոյգան գիւղի Ս. Աստիածածին եւ Նոր Զուղայի Ս. Յովիկանու եկեղեցիներում երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան վաճիք «Կոմիտաս», իսկ Նոր Զուղայի Ս. Աստիածածին եկեղեցում «Շուշանիկ» հոգեւոր երգչախմբերը:

Յատկանշական է, որ Խոյգան գիւղի Ս. Աստիածածին եկեղեցու ձեռագիր աւետարանը, որը վերջին տարիներին պահում է Ս. Ամենափրկչեան վաճքում, Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի ամենամեայ յատուկ դասաւորութեամբ, Վերափոխման տօնի առթիւ վերադարձում է պատկան եկեղեցի եւ ուխտաւորներն այս Սուրբ Գրքից օրինութիւն են ստանում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԾ

ԱՆԱԿԵՐՏԱԿԱՆ-ՌԻՍՈՒՑՉԱԿԱՆ ՊԱՏԻՒՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԸ ՆՈՐ ԶՈՒՂԱ

Ընթացիկ տարւայ ապրիլին Հայաստանում Իրանի ԽԱՆ. Հանրապետութեան դեսպանատան միջոցով կազմակերպէց պարսկերէն լեզու օլիմպիադա, որին մասնակցել էին Հայաստանի մի շարք դպրոցների սաներ, որտեղ որպէս երրորդ լեզու աշակերտները սովորում են պարսկերէն: Սոյն օլիմպիադայի շրջագծում յաջողութիւններ արձանագրած դպրոցականներն իրենց պատասխանառուների ուղեկցութեամբ օգոստոսի 24-27-ը եղան Սպահան քաղաքում յատկապէս վայելելով Նոր Զուղայի տեսարժան վայրերը:



Պատվիրակութեանը մաս էին կամզել 19 աշակերտնիներ՝ Հայաստանի տարբեր մարզերի դպրոցներից եւ 6 ուսուցիչ-ուիմիներ՝ Արսէն Օհանեանի ղեկավարութեամբ:



Նոր Զուղա եղած ժամանակահատածում, չորեքշաբթի՝ օգոստոսի 24-ին, ճամբարախմբի անդամները նախ այցելեցին Հայոց ազգ կրթահամալիր, որտեղ նրանց շերմ ընդունեցին «Քանանեան» աղջկանց միշնակարգ դպրոցի փոխ-տնօրէն Ռիմա Սիմոնեանը, գրադարանավարութի Կարին Տէր-Մարտիրոսեանը եւ Ծնողական խորհրդի ներկայացուցիչները:

Կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում տկն. Սիմոնեանը հիւրերին ծանօթացրեց Նոր Զուղայի հայ համայնքի կազմաւորման՝ ի մասնաւորի դպրոցնե-

րի հիմնադրման պատմական անցեալին, ապա հանդիպումը շարունակւեց հետաքրքիր հարց ու պատասխանների ներքոյ: Պատվիրակութեան անունից դպրոցի գրադարանին նվիրւեց «Խմարեսիոնիզմ նկարիչ հայեր» գիրը:



Այնուհետև խումբը շրջելով Կրթահամալիրի տարբեր բաժիններ՝ առաւել ծանօթացաւ առկայ հնարատութիւններին, որից յետոյ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ դպրոցի անձնակազմի կողմից աշակերտներին նվիրւեցին յուշանւերներ:

Յաջորդի խումբը յաճախեց Ս. Ամենափրկչեան վանք, որ օրն առաւել յիշարժան դարձաւ՝ «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի, «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարան եւ «Խաչատուր Կեսարացի» թանգարան կատարած այցելութիւններով:



Պատվիրակութիւնը յաջորդ օրերի ընթացքում այցելեց նաև «Քանանեան» դպրոցի նախկին շենքը եւ Սպահան քաղաքի մի շարք այլ տեսարժան վայրեր:

Հարկ է նշել, որ Նոր Զուղա եղած ժամանակ խումբը կեցութիւն էր հաստատել Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութիւնում:

ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ԲԵՄԱԴՐՈՒԹԻՒՆ՝ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ «Ս. ՆԵՐՍԻՍ ԾՆՈՐՀԱՎԼԻ» ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 110-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ



Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վաճքի «Ս. Ներսէ Շնորհալի» գրադարանի պատասխանատուները շարունակ իրենց ուշադրութեան կիզակէտում պահելով մատառ սերնդի ընթերցանութիւնը եւ հայեցի դաստիարակութիւնը՝ ջանք չեն խնայում նրանց հայկական ու համաշխարհային գրականութեան թանկագին գոհարներին ծանօթացնելու գործում, որի վառ ապացույց կարելի է համարել գրադարանի ընթերցասրահում մանուկների համար նախատեսած ընթերցանութեան առանձին բաժինը եւ հայերէն ու պարսկերէն վերջին հրատարակութիւններով համալրւած մանկական գրքերի հարուստ շտեմարանը:



Իսկ այս անգամ երեխաների նկատմամբ իրավատուկ ուշադրութիւնն արտացոլւեց նաև «Ս. Ներսէ Շնորհալի» գրադարանի հիմնադրման 110-ամեակի յութեանական միջոցառումների կազմակերպիչ յանձնախմբի ծրագրում՝ Աթարքէ Խնկոյեանի «Մկների Ժողովը» հերիաթի տիկնիկային թատրոնի բեմադրութեամբ:

Այս ներկայացումն իրականացւեց Կազմակերպիչ յանձնախմբի նախաձեռնութեամբ եւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կոռունկ» ասմունքի խմբի ու թատրոնի ասպարեզում մի

շարք արհեստավարժ անհատների համագործակցութեամբ, շաբաթ եւ կիրակի՝ օգոստոսի 6-ին ու 7-ին, յութեար գրադարանում, երկուական սեանսների ներքոյ: Ծրագիրը մեծ ընդառաջում գտաւ թէ կրտսերների եւ թէ մեծահասակների կողմից, ովքեր միմեանցից ոչ պակաս ոգեւորութեամբ ու խանդավառութեամբ էին հետեւում արարի ընթացքին:

Ներկայացումն սկիզբ առաւ պատմիչ Կապուտակի եւ նրա օգնական Պիպոդի միջոցով, ովքեր հանդիսատեսին ընդհանուր բացարութիւններ տվեցին յատկապէս հերիաթի, պատկան հեղինակի ու պատմութեան մկների ու կատիկ մասին: Ապա բոլորիս ծանօթ ստեղծագործութիւնը բեմականացւեց կատիկ եւ տիկնիկ մկների կատարմամբ, իսկ տիկնիկախաղին զուգորդած երգերն առաւել խանդավառեց երեխաներն: Թէեւ ըստ Աթարքէ Խնկոյեանի հերիաթն աւարտում է մկների անյաջողութեամբ, քանի որ իրենց վախկութիւնն եւ ոչ միասնական լինելու պատճառով չեն կարողանում զանգը կախել կատիկ վզին, սակայն բեմադրիչների գեղեցիկ մտայդացմամբ ներկայացումը եզրափակւեց մի երգով, որով փոքրիկներին խրատ տրւեց միշտ բարի լինել եւ չմոռանալ, որ «Վերջում բարին է յաղթում»:




Տիկնիկային թատրոնի ոեժիսրութեան բարդ աշխատանքը կատարել էր Ոիմա Միմոնեանի ու Կարին Տէր-Մարտիրոսեանի միջոցով, իսկ ծրագրի իրականացման գործում յանձնախումբը վայելել է արժ. Տ. Սահակ քինը. Մինասեանի, Զարեհ Թորոսեանի, Վանանդ Խաղովեանի եւ Անդրիա Խաչատրեանի համագործակցութիւնը:

Տիկնիկների բեմադրողներն էին՝ Նոռա Ուկանեանը, Սոնիա Դիլանչեանը, Վանա Շիրանեանը, Մեղրի Ղուկասեանը, Շաղիկ Մատթէոսեանը, Ալինա Ալեքսանդրեանն ու Սոսէ Ասատրեանը: Լալագէ Խաղուլեանը մարմնաւորեց կատիկ կերպարը, իսկ Կարին Տէր-Մարտիրոսեանը եւ Ալինա Տէր-Սուրիասեանը հանդէս եկան որպէս պատմիչն ու իր օգնականը, Կապուտակի եւ Պիպոդի դերում:

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՆՏԻՐԻԱԾ ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ ԾՆՆԴԵԱՆ 155-ԱՄԵԱԿԻՆ

Նախաձեռնութեամբ Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի Գրական խմբի եւ Ս. Ամենափրկիչ Վաճիքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի համագործակցութեամբ, չորեքշաբթի՝ թականիս յուլիսի 13-ի երեկոյեան, նոյն միութեան յարկի Շերքոյ տեղի ունեցաւ գրական երեկոյ՝ նիդրած նշանաւոր գրող եւ քաղաքագէտ Գրիգոր Զոհրապի ծննդեան 155-ամեակին:



Ներկաներին ողջունեց Գրական խմբի պատասխանատու եւ ղեկավար Ռիմա Սիմոնեանը, ապա հակիր

տողերով տեղեկութիւններ փոխանցեց Գրական խմբի, «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի եւ երեկոյի կազմակերպման մասին: Հրահրուած էր բանախօսելու գերպ. Տ. Անանիա Ծ. վլդ. Գումանեանը, ով հանդէս եկաւ Գ. Զոհրապի կենսագրութեամբ եւ ներկայացրեց նրա հնտարքորութիւնների լայն շրջանակի, ազգային-հասարակական եւ քաղաքական դաշտում նրա ունեցած մեծ ներդրումի եւ յատկապէս, որպէս փաստաբան, դիւանագէտ, լրագրող եւ Թուրքիոյ խորհրդարանում որպէս պատգամաւոր՝ ազգային շահերից մղաւած կարեւոր ներդրումի մասին կատարած իր ուսումնափրութիւնը, համեմած թեմատիկ վկայութիւնների տեսանիւթերով եւ Գ. Զոհրապի մոքերով:

Գերպ. Հայր Սուլրբն իր բանախօսութեան աւարտին, կոչ արեց՝ զբաղել գրականութեամբ եւ ընթերցել մեր մեծերի ու նախմինների պատմութիւնն ու գրականութիւնը եւ նրանց կտակը փոխանցել նոր սերնդին:

Վերջում գերպ. Հայր Սուլրը պատասխաննեց ներկաների կողմից հնչած հարցումներին:

Երեկոն աւարտւեց շնորհակալական խօսքերով՝ ուղղած գերպ. Հայր Սուլրին՝ հրաւերին ընդառաջելու եւ դասախօսելու առումով եւ հայ մեծերի յիշատակը յարգող գրասէր հասարակութեանը՝ ներկայութեան համար:

ԼԻՍԲՈՆԻ ՀԻՆԳ ՄԱՐՏԻԿԱՆԵՐԻՆ ՆՏԻՐԻԱԾ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑԱՆԱՐ



Ակատուտական միաւորի Գերագոյն մարմնի նախաձեռնութեամբ 27-տարի անընդմէջ կազմակեալել են մրցաշարեր եւ յիշատակի երեկոներ:



Չորեքշաբթի՝ թականիս յուլիսի 20-ից 25-ը, նոյն միութեան մարզարանում կայացաւ Լիսբոնի հինգ մարտիկներին նիդրած ֆուտբոլի մրցաշար՝ մասնակցութեամբ համայնքի երիտասարդներից կազմած «Արարատ», «Ղարաբաղ», «Էրեբունի», «Արցախ», «Արքայ» եւ «Նայիրի» խմբերի: Եզրափակիչ փուլում մրցակցեցին «Արարատ» եւ «Արցախ» խմբերը, որի արդիւնքում 4-2 հաշտով յաղթող ճանաչւեց «Արցախ» խումբը:

Հինգ անձնազո՞ր մարտիկների յիշատակը յարգելու նպատակով՝ Նոր Զուղայի Հայ մարզա-մշակութային «Արարատ» միութեան

Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՏԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԱՍՆԱԿՅԵՅ «ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԱՌԱՏՈՆԻ

Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի պատիրակութիւնը, յունիսի 21-ի առաւօտեան մեկնեց Հայաստան՝ մասնակցելու յունիսի 22-ից մեկնարկող «Իմ Հայաստան» համահայկական փառատօնին:



Պատիրակութեան անդամների ընդհանուր թիւ 12-էր, որին մաս էին կազմում՝ «Կոռունկ» պատանեկան խումբը, Մշակութային միաւորի վարչութեան ներկայացուցիչներ՝ Քարմնն Ղեւեանը, Նայիրի Այսագեանը, միաւորի «Կոռունկ» պարախմբի ղեկավար եւ պարերի թեմադրիչ Նունէ Մկրտչեանը եւ փորձավար Քրիստինի Յակոբեանը:



Փառատօնի բացման հանդիսութեան ընթացքում խումբը հանդէս եկաւ Սայեաթ Նովայի «Նազանի» երգի ներքոյ, իսկ փառատօնի ընթացքում ներկայացրեց Անուշ եւ Խնգա Արշակեանների «Մենք ենք ու սարերը մեր», գուսան Շերամի «Շորորա», Սայեաթ Նովայի «Նազանի», Խաչատուր Աւետիսեանի «Էրզորումի շորոր» եւ ժողովրդական «Վերվերի» խմբային պարերն ու մենապարերը:

Նշելի է, որ պատիրակութիւնը մեկնելուց առաջ ստացաւ արժն. Տ. Խաչատուր քնն. Զարգարեանի օրինականութիւնը: Վերջում «Պահպանի» աղօթքով նրանց բարի երթ մաղթեց արժն. Քահանայ Հայրը: Բարի երթ մաղթելու համար ներկայ էին նաև միութեան կենտրոնական վարչութեան ներկայացուցիչներն ու ծնողները:

«Կոռունկ» պարախմբի գեկոյցը «Իմ Հայաստան» փառատօնից

ՀՀ Սփիտքի նախարարութեան կազմակերպած «Իմ Հայաստան» 3-րդ համահայկական փառատօնին մասնակցելու նպատակով, Ն. Զ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան «Կոռունկ» պարախմբը յունիսի 21-ին մեկնել է Հայաստան:



Յունիսի 22-ին «Իմ Հայաստան» փառատօնին ընդուած պարախմբի պատասխանատուներն մասնակցել են ՀՀ Սփիտքի նախարար՝ Հրանուշ Յակոբեանի հետ կազմակերպած հանդիպմանը եւ խմբի պատասխանատուն հանդէս է եկել շնորհակալական խօսքերով:



Նոյն օրը երեկոյեան պարախմբը մասնակցել է ԱԼ. Սպենդիարեանի անան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայացած Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 25-ամեակին նշումած «Իմ Հայաստան» փառատօնի, պարարևեսի օրեր ծրագրի բացման հանդիսաւոր արարողութեանը եւ հանդէս է եկել Սայեաթ Նովայի «Նազանի երգի» ներքոյութեանը:

Յուլիսի 24-ին պարախմբը հիմքունկալել է Շիրակի Մարզում եւ ճանապարհին այցելել է 7-րդ դարում կառուցւած Սուլք Գրիգոր Եկեղեցին, իսկ Գիւմրիում Սուլք Աստիածածին Մայր Եկեղեցին:

Նոյն օրը երեկոյեան համերգով հանդէս է եկել Գիւմրիի «Վարդան Ամենեան» անան պետական դրամա-

տիկական թատրոնում:



Յովիսի 26-ին այցելել է Ծիծեռնակաբերդ եւ հաւաքական ծաղկեմատոյցով իր յարգանքի տուրքն է մատուցել Հայոց Ցեղասպանութեան սուրբ Նահատակների յիշատակին:

Յովիսի 27-ին Հայոց բանակի զինորների համար Հայկական ժողովրդական պարերի կատարումով հանդէս է եկել ՀՀ Զինած ուժերի Նուբարաշէնի թիւ N զօրամասում: Եզրափակիչ կատարումների աւարտին Սփիտքի նախարարութեան «Խմ Հայաստան» փառատօնի Մշակութային հարցերով պատասխանատու՝ Լառուա Աւետիսեանը «Կոռոնկ» պարախմբի գեղարևուտական դեկավար՝ Նունէ Մկրտչեանին յանձնել է փառատօնին մասնակցելու հաւաստագիր եւ յուշամետալ:

Պատիրակութեան ընդհանուր պատասխանատու Քարմէն Ղեւեանը մասնակցել է «Armnews» հեռուստաընկերութեան «Առաջին ծրագիր» հաղորդաշարին

Եւ ուղիղ եթերում պատասխանել է հաղորդավարի կողմից հնչած հարցերին:



Սփիտքի նախարարութեան «Հայերն այսօր» Էլեկտրոնային պարբերականի թղթակիցը հարցազրոյց է ունեցել Խոմի դեկավար եւ պարուսոյց Նունէ Մկրտչեանի հետ:

Պատիրակութիւնը յովիսի 29-ին վերադարձել է Նոր Զուղա:

Նշելի է, որ պարախումբը Եերկայացրել են Ալմարա Թահմազեանը, Անիա Թորոսեանը, Անիշա Խաչեանը, Անի Մկրտչեանը, Թէա Թահմազեանը, Լուսին Մինասեանը, Մինէլի Ղազարեանը, Սելին Մկրտչեանը եւ փորձավար Քրիստինէ Ցակորեանը:

«ԳԻՏՈՒՆԻԿԻ ՏՆԱԿ» ԱՄԱՌԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

«Գիտունիկի տնակ» ամառային մանկական հետաքրքիր ու յաջող ծրագիրն այս տարի եւս ամռան արձակուրողին իր շուրջը համախմբեց համայնքի մանուկներին:



Ծրագիրը կայացաւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան մանկական բաժնին կից բացօթեայ տարածքում, ուր շաբաթական երկու պահ երեկոյեան ժամը

7:30-ից 9:00-ը մանուկներն ունկնդրեցին հեքիաթներ, սովորեցին ազգային եւ սպորտ պարեր, մանկական երգեր, զարդանախշեցին կատէ իրեր ու ստեղծագործեցին նկարչութիւններ, ինչպէս նաև մասնակից դարձան «Կարմիր գլխարկ»-ի տիկնիկային Եերկայացմանը:



Բազմաբնոյթ մասերով յագեցած «Գիտունիկի տնակ» ծրագիրն ամառային խանդավառ զբաղմունքից եւ գեղեցիկ յիշողութիւններ ստեղծելուց զատ, մա-

Առկմերին առիթ տևեց դրսեւորել իրենց ունակութիւնները՝ ելոյթ ունենալ երգերով, պարերով, արտայայտելով, տեսակէտ յայտնելով ու հարցումներին պատասխանելով:



«Գիտունիկի տնակ» մանկական ամառային աշխատանքը իր իրայատուկ աշխուժութեամբ ու խանդավառութեամբ դարձաւ երեխաների, երիտասարդ մայրերի ու մեծ մայրերի ամենասիրած ու ամենասպասարած ծրագիրը:

«Գիտունիկի տնակ»-ն իր աշխատանքը աւարտեց շաբաթ՝ թականին օգոստոսի 20-ին, որտեղ տեղի ունեցաւ նաև մրցութային բաժին՝ իրականացնած աշխա-

տանքներից:



Ծրագիրն իրականացաւ Մշակութային միաւորի վարչութեան, մի շարք տաղանդաշատ անդամութիների, անհատ մասնագէտների ու ծնողների անվերապահ համագործակցութեամբ:

ԼԻՍԲՈՆԻ ՀԻՆԴ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՅԻՆԱՏԱԿԻՆ ՆԻՒՐԻԱԾ ՑՈՒԾԵՐԵԿՈՅ

Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի Գերագոյն մարմնի նախաձեռնութեամբ, երկուշարքի՝ օգոստոսի 22-ի երեկոյեան միութեան հանդիսութիւնների դահլիճում տեղի ունեցաւ յուշերեկոյ՝ նիրաւած 1983 թ. յուլիսի 27-ին Լիսբոնում զոհած հինգ մարտիկների յիշատակին:



Միջոցառման սկզբում միաւորի Արի-Արենուշական հատածների միջոցով կատարեց դրօշակի արարողութին, ասա միաւորի Գերագոյն մարմնի հօսքը ընթերցեց ծեռնարկի հաղորդավարութի Վեհանուշ Խուլդաբախշեանը, որում մասնաւորապէս ասւած էր՝ «Այսօր մենք պատրաստած ենք զգալու Լիսբոնի հինգի նահատակութեան եւ երազի քաղցրութիւնը եւ ունենալու նոյն երազի ճամբան՝ հաստատերով, որ այսօր մենք պէտք է ժամանակաշրջանի նոր թանաքով գծենք այն նոյն քարտէզը, որ փորձեցին զծել մեր նախնինները՝

իրենց արեամբ»:



Բացման ծրագրից յետոյ ներկաներն ունկնդրեցին Լիսբոնի հինգի կենսագրութիւնները, որոնք ներկայացրին Վանիա Պետրոսեանը, Տաթեակ Տէր-Մարտիրոսեանը, Անի Մկրտչեանը, Սիկիան Անդրիասեանը եւ Վարագ Փանոսեանը:



Գեղարւեստական յայտագրում «Զինորի երգը» նւագակցութեամբ Շանթ Մելքոնեանի, կատարեց Արայիկ Սիմոնեանը, ապա Դին Յովհաննիսեանը եւ Թանգիկ Միրզախանեանը հերթաբար հանդէս եկան

«Տուն իմ հայրենի» եւ «Հայ զինուոր» երգերով, իսկ նարեգա Սիմոնեանը ասմունքեց Վահագն Դաւթեանի «Ես՝ Հայաստան, ես՝ քարեց» բանաստեղծութիւնը, որոնք ընդմիջեցին 1983 թ. յուլիսի 27-ին հինգ մարտիկների անձնազնոհական ակտի ժամանակագրական մանրամասնութիւնների ընթերցմամբ՝ Վանիա Պետրոսեանի միջոցով:



Ցաջորդիւ երաժշտական նորաստեղծ «Դումահ» խումբը, մասնակցութեամբ Արագիկ Սիմոնեանի, Մամբրէ Թահմազեանի, Սերգէ Փանոսեանի եւ Շանթ Սարեանի կատարեցին «Հայրենիք» երգը: Գեղարևեստական մասը եզրափակեց Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի կատարմամբ՝ «Ազգ իմ փառապան» խմբերգով:

Երեկոյի աւարտին գնահատագրերով եւ յուշանէր-

մերով պարգևատրեցին յուլիսի 20-ից 25-ը կայացած հինգ մարտիկներին նվիրած ֆուտբոլի մրցաշարի առաջին եւ երկրորդ տեղը գրաղեցրած «Արցախ» եւ «Արարատ» խմբերի մարզիկները եւ մրցավարներ՝ Կարո Շահբագեանը, Միշել Ղազարեանը, Մասիս Հայրապետեանը, Էդմոնդ Բաղդասարեանը, Թումիկ Նահապետեանը եւ Սեւան Դարաբիդեանը, նաև մրցութիւնների ընթացքում դարպասը ամենաշատ գնդակ նետած Ռուբեն Խասովլեանը եւ ամենալաւ վարք ցուցաբերած Հրատ Ղուկասեանը:



Մրցաշարի շրջանակում կազմակերպել էր նաև ընկերական մանկա-պատանեկան խաղ՝ միութեան ֆուտբոլի խմբի սաների մասնակցութեամբ, որոնք եւս պարգևատրեցին գնահատագրերով: (մանկա-պատանեկան խմբի մարզիկներն են Սերժիկ Ասատրեանը եւ Էդո Թորոսեան)

Գնահատագրերը յանձնեցին Միութեան Կենտրոնական վարչութեան եւ Սկաուտական միաւորի գերագոյն մարմնի ներկայացուցները:

Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ «ՏԱՐԵՒ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ՄԱՍՆԱԿՅԵՅ

«ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ Յ-ՐԴ ՓԱՌԱՏՕՆԻՆ



Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 25-ամեակի առթիւ ՀՀ Սփիտքի նախարարութեան նախաձեռնութեամբ կազմակերպեց «Իմ Հայաստան» համահայկական Յ-ՐԴ փառատօնը, որի «Խմբերգային արևստի օրեր» բաժնում իր մասնակցութիւնը ցուցաբեց նաև Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վաճքի

«Տաթեւ» երգչախումբը՝ ղեկավարութեամբ մայեստրո Համիկ Ալեքսանդրեանի եւ հովանաւորութեամբ Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի:

«Խմբերգային արևստի օրեր»-ի մեկնարկը տրւեց օգոստոսի 5-ին՝ մասնակցութեամբ Հայաստանից եւ Սիինուրից երգչախմբերի:



Ծրագրի համաձայն օգոստոսի 5-ի առաւատեան, մասնակից երգչախմբերի խմբավարները հանդիպում ունեցան ՀՀ Սփիտքի նախարար Հրանուշ Ցակորեանի հետ՝ յառաջիկայ օրերի ծրագրերի շուրջ մի շարք

քննարկումներ եւ տեսակէտների փոխանակումներ կատարելու համար, որի աւարտին «Տաթեւ» երգչախմբի անունից յուշանելէր յանձնեց տիկին նախարարին:

Փառատօնի հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ նոյն օրւայ երեկոյեան, «Արամ Խաչատրեան» մեծ համերգասրահում, ուր խմբերը հանդէս եկան երկուական խմբերերի կատարումներով, իսկ որպէս եզրափակիչ ելոյթ բոլոր երգչախմբերը ընկերակցութեամբ ՀՀ Ակադեմիական երգչախմբի, միասնաբար կատարեցին «Հայրենիքիս հետ» երգը, որի խօսքի հեղինակն է Յովկի Թումանեանը, իսկ երաժշտութեանը՝ Ալեքսանդր Յարութիւնեանը: Հիասքանչ այս կատարումը դեկավարեց ՀՀ վաստակաւոր արտիստ, կենդանի լեգենդ մայստրո Յովկիաննես Զերիջեանը:



Բացման երեկոյի ընթացքում «Տաթեւ» երգչախումբը հանդէս եկա Կոմիտասի «Եար ջան արի» եւ խմբավար Համիկ Ալեքսանդրեանի «Ես իմ սէրն եմ սիրում» երգերի կատարմամբ, որոնք բարձր գնահատեցին հանդիսաւեսի կողմից:

Ցաջորդ օրերի ընթացքում նախ օգոստոսի 7-ին, «Տաթեւ»-ը Շիրակի մարզում ելոյթ ունեցաւ Գիմրիի «Թիւ 4 երաժշտական դպրոց»-ում, ապա օգոստոսի 8-ին, Լոռու մարզում, Վանաձորի «Պարարեստի դպրոց»-ում իր անզուգական կատարումներով շոյեց արևստասէր հանդիսաւեսի ականջը: Վանաձորում իրականացրած ելոյթի աւարտին կատարումները գնահատեցին տեղի բաղաքավետարանի կողմից, որոնց համար երգչախումբն արժանացաւ սոյն հաստատութեան շնորհակալագրին:



Փառատօնի փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ օգոստոսի 10-ի երեկոյեան, «Յակոր Պարոնեան» ամեան երաժշտական կոմետիայի պետական թատրո-

նում, որտեղ «Տաթեւ» երգչախումբը հանդէս եկաւ երեք երգերով՝ Սերգէս Աղաջանեանի «Ծուշւոյ» եւ մայեստրո Ալեքսանդրեանի «Կոյս ձեռքեր» ու «Նոր Զուղա» ստեղծագործութիւններով, որոնք նոյնական երկաների բարձր գնահատանքին: Փակման ձեռնարկի աւարտին մասնակից բոլոր խմբերը տկն. Յակոբեանի ձեռամբ ստացան յուշամեդալներ եւ հաւատագրեր:



Յատկանշական է, որ այցելութիւնների շարանում երգչախմբի անադմները օգոստոսի 6-ին եղան Ծիծեռնակաբերդի յուշահամալիրում, Շիրակի մարզում այցելեցին Գիմրիի Ս. Աստվածածին եկեղեցի, իսկ Լոռու մարզ եղած ժամանակահատածում յաճախեցին Սպիտակի երկրաշարժի զոհերի յիշատակին նվիրած յուշահամալիր:



«Տաթեւ»-ի անդամները Նոր Զուղա վերադարձան օգոստոսի 11-ի առաւտեան:

Հարկ է նշել, որ «Տաթեւ» երգչախումբը նախքան Հայաստան մեկնելը Կրօնական խորհրդի անդամների ներկայութեամբ կատարել էր փառատօնի շրջագծում ներկայացւելիք իր ելոյթները՝ արժանանալով խորհրդի բարձր գնահատանքին:


ԶԱՒԱԽԲԻՆ ՆԻՒՐԻԱԾ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԴԱԵՏԱՀԱՆԴԻՍ

Նոր Զուղայի Հայութեաց բարեգործական ընկերութիւնը, համագործակցութեամբ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտրոնական վարչութեան, 2002 թւականից ցայսօր ամենամեայ կարգով կազմակերպում է բարեգործական դաշտահանդէս՝ յօգուտ շատախքահայութեան, որի հասոյթն ամբողջութեամբ յատկացում է սոյն նպատակով շրջանի Հայ Դատի կողմից ստեղծած հիմնադրամին:



Ծրագիրն իրականացնեց ուրբաթ՝ օգոստոսի 5-ի երեկոյեան, Նոր Զուղայի «Արարատ» միութեան շրջափակում, որտեղ ժողովուրդը ոչ միայն առիթ ունեցաւ վայելելու անակնկալներով ողողլած եւ խանդավառ միջնորդումը՝ իր բազմատեսակ եւ զարգացած խաղերով, անուշաբեր ուտեստներով, ինչու չէ նաև հնչող գեղեցիկ երաժշտութեամբ, այլեւ իր նիդրատութիւններով սոյն բարեգործական աշխատանքի մասնակիցը եղաւ:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՒԿԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՄԵԱՅ ԱՄԱՌԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՍ-ՎԱՃԱՌՔ



Ն.Զ. Հայութեաց բարեգործական ընկերութեան նախաձեռնութեամբ ամենամեայ կարգով կազմակերպուղ ձեռարիւստի ամառային ցուցահանդէս-վաճառքի մեկնարկը տրեց չորեքշաբթի՝ օգոստոսի 10-ի առաօտեան, Ս. Ամենափրկչեան վանքի ցուցարանում:



Բարեգործական նպատակներով իրականացնող սոյն ծրագրի բացումը կատարւեց արժն. Տ. Մեսրոպ աւ. քին. Գալստանեանի ձեռամբ, ով յաջողութիւն մաղթելով կազմակերպիչներին եւ ուժ ու կորով ցանկանալով աշխատանքում դերակատար բոլոր անձանց, ներկաներին հրաիրեց միանական «Տէրունական աղօթք» բարձրացնել առ Աստիած:



Վաճառքի աշխատանքը շարունակւեց քանի օրերի ընթացքում, որի հասոյթը ծառայելու է բարեգործական նպատակներով աշխատանքներին: Սոյն ծրագիրը լաւագոյն առիթներից է՝ Ս. Ամենափրկչեան վանք այցելող պարսիկ եւ օտարերկրացի զբուաշրջիկներին համայնքի հայութիւնների նրբաճաշակ ձեռքի աշխատանքներին ծանօթացնելու համար:

Հ.Մ.Ա.Կ.-Ի ՍԿԱՌՈՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՐԵՆՈՒԾ 1 ԽՄԲԻ ԱՅՅԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՅ ԱՇԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՅ

Հ.Մ.Ա.Կ.-ի Ակաուտական միութեան Արենուշ 1 խումբը յովիսի 6:00-ին այցելեց Նոր Զուղայի իրենց կողմից կազմակերպած ճամբարի շրջագծում եւ Նոր Զուղա եղած ժամանակահատածում խումբը հանգրտանեց հայոց ազգային «Քանանեան» դպրոցի նախկին չէնցում: Սյուն ճամբարի ընթացքում, որն աւարտուեց յովիսի 9-ին, մասնակիցներն օբաղւեցին զանազան այցելութիւններով ու ծրագրած այլ աշխատանքներով, որոնց շարանում յովիսի 6-ի առաւտեան այցելեց Նոր Զուղայի հայոց ազգային ծերանոց:



Ծերանոցում նրանց ջերմ դիմաւորեցին տեղի բնակիչներն ու վարչը եւ ծերանոցը դեկավարող Նոր Զուղայի Հայ Կանանց Գրութեան միութեան Վարչութեան ու Ծերանոցի յանձնախմբի ներկայացուցիչները: Ակզբում հիւրերին բարի գալուստ մաղթեց միութեան վարչութեան փոխ-նախագահուին ժամեւու Խուդաբախչեանը, ով բացատրութեամբ հանդէս եկաւ միութեան հիմնադրման նպատակների եւ գործունեութեան վերաբերեալ:

Ապա Արենուշ 1 խմբի սկաուտները, հաւատարիմ մնալով սկաուտի «Օրը մի բարի գործ կատարելու» սկզբունքին, անուշեղէններ նիւթեցին ծերանոցին եւ իրենց դրամական օժանդակութիւնը փոխանցեցին սոյն հանգստի տան պատասխանատուներին: Նրանք ներկայաց-

րին սկաուտի կեանքի ու գործունեութեան շուրջ մի շարք տեղեկութիւններ, որից յետոյ գրոյցը շարունակեց առաւել մտերմիկ մթնոլորտի ներքոյ, որտեղ տարուց բանկիչները պատմեցին իրենց կատարած գործունեութեան եւ կեանքի հանելի դրագների մասին: Ընթացքում երիտասարդ հիւրերը կատարեցին սկաուտական երգեր ու պարեցին տարեցների հետ:



Հետաքրքիր ու խանդավառ այցելութեան աւարտին Կանանց Գրութեան միութեան կողմից «Հայկական ժողովրդական տարագներ» եւ «1915-ի ինքնապաշտպանական կոհիւները» գրքերը նիւթեցին այցելուներին, որից յետոյ նրանք ծանօթացան ծերանոցի տարբեր բաժիններին:

ՊԱՏԱԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՅՑ ԱՅՅԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՅ ԱՇԳ. ԾԵՐԱՆՈՅ



ցուցիչ պր. Նարիմանին եւ «Բարեկեցութիւն» հիմնարկի ոչ-պետական կենտրոնների պատասխանատու տկն. Եազդիսարդին:

Ծերանոցի յարկի ներքոյ հիւրերին ջերմ դիմաւորեց ծերանոցը դեկավարող հաստատութեան՝ Ն. Զ. Հայ կանանց գրութեան միութեան վարչութեան նախագահուին Արմինէ Սիմոնեանը, ով ընդհանուր տեղեկութիւններով հանդէս եկաւ ծերանոցի գործունեութեան կապակցութեամբ եւ պատասխանեց այցելուներին յուզող հարցերին՝ ծերանոցի հիմնադրման, բնակիչների, աշխատակազմի եւ կենտրոնի ղեկավարման ձեւի շրջագծում:

Այցելութեան աւարտին հիւրերը մօտիկից ծանօթացան ծերանոցի տարբեր բաժիններին եւ տարեց բնակիչների առողջական վիճակին ու կենցաղային պայմաններին, ինչը մեծ գործունակութիւն առաջացրեց նրանց մօտ:

ՓԵՐԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ «ԷՐԵԲՈՒՆԻ» ՊԱՐԱԽՈՒՄԲԸ՝ «ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ» Յ-ՐԴ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻ ԵՐԶԱԳԾՈՒՄ

ՀՀ Սփիտքի նախարարութեան նախաձեռնութեամբ Հայաստանի Հանրապետութեան ամելախութեան 25-ամեակին նիրուած «Խմ Հայաստան» Յ-րդ համահայկական փառատօնի «Պարարևստի օրեր» խորագրով բաժնի հանդիսաւոր մեկնարկը տրեց յուլիսի 22-ի երեկոյեան, Սպենդիարեանի անան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում՝ զանազան երկրներից 40 պարախմբերի մասնակցութեամբ։ Սոյն փառատօնին մասնակցել էր նաև Փերիոյ կրթասիրաց միութեան «Էրեբունի» պարախումբը՝ ղեկավարութեամբ պարուսոյց Ալինա Գրիգորեանի։



«Էրեբունի» պարախումբը նոր Զուղայից հայրենիք մեկնեց յուլիսի 20-ին եւ կեցութիւն հաստատեց Երեւանի «Ծիրակ» հիմնացում։

Խումբը փառատօնի շրջագծում «Տափի», «Մուշ» եւ «Նազպար» կատարումներով ելոյթներ ունեցաւ բացման ձեռնարկի ընթացքում, Արմակի մարզի Մշակույթի տանն ու Յակոբ Պարոնեանի անան թատերաբանում։ աւարտին բոլոր անդամներին շնորհւեցին մասնակցութեան հաւասարագրեր ու յուշամեդալներ։

Հարկ է նշել, որ խմբի պատասխանատուներ՝ Վահան Թահմանցեանն ու Զարենուշ Աղոյրեանը Սփիտքի նախարարութեան հարւերով յուլիսի 22-ի առաւտեան, մասնակցեցին Հրանուշ Յանուշ Յանուշեանի հետ հանդիպմանը, ուր քննարկեցին զանազան խնդիրներ՝ «Խմ Հայաստան» փառատօնի շրջագծում եւ հնչեցին առաջարկներ ծրագրի առաւել արդինաւետ կազմակերպման

ուղղութեամբ։ Հանդիպման աւարտին նախարարութեան կողմից յիշեալներին յանձնեց յուշաներ։



Սոյն ժամանակահատուածում պարախումբը մասնակցեց նաև կազմակերպիչների կողմից նախատեսած մի շարք շրջագայութիւնների ինչպիսին են՝ Զարթնոցի ու Ս. Հոհիսիմի տաճարներ եւ Ս. Էջմիածին կատարած այցելութիւնները, իսկ միութեան նախաձեռնութեամբ անդամները համելի պահեր անցկացրին Սեւանում եւ Ապարանում։



«Էրեբունի» պարախումբը օգոստոսի 5-ին, վերադաւ նոր Զուղա՝ հայրենիքում ձեռք բերած նորանոր փորձառութիւններով ու անմոռանալի յուշերով։

Հ.Յ.Դ. «ԹԱԴԵՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ» ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊՈՂԱԿԱՆ ՃԱՄԲԱՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հ.Յ. Դաշնակցութեան «Թադէոս Թադէոսեան» պատանեկան միութիւնն իր դաստիարակչական աշխատանքների շրջագծում Դաշնակցութեան պատմութեանը, կուսակցական գործիչներին, ինչու չէ նաև հայենիքի տարբեր շրջանները միութեական պատանի-

ներին առաւել ծանօթացնելու նպատակով, այս անգամ իր ամենամեայ ամառային ճամբարը կազմակերպեց հայրենիքում։

25 պատանիներից եւ երեք պատասխանատուներից կազմած ճամբարախումբը յուլիսի 28-ին նոր Զուղա-

յից հանրակառով մեկմեց եւ յաջորդ օրը կեցութիւն հաստատեց Ստեփանակերտի հիւրանոցներից մէկում:



Այցելութիւնների մեկնարկը տրւեց յուլիսի 30-ին, Գանձասարի վաճռում: Սոյն սրբավայրում պատաճերը պատահաբար հանդիպեցին Մատաղիսում ծառայող մի խումբ զինուրների, որոնց հետ մօտիկից շփւելն ու գրուցելը՝ յատկապէս Արցախի քառօրեա պատերազմի մասին, մեծ ոգեւորութիւն պատճառեց նրանց: Ցուցիչ հանդիպման աւարտին հայ զինուրի եւ սիփիւրքահայ պատանու խմբական կատարումներով հնչեցին հայրենասփորական երգեր: Այնուհետեւ խումբը շարժւեց դէպի Ղշլաղ գիւղում գտնող Նիկոլ Շումանի տուն-թանգարան, որը հաղորդ դարձաւ նիրեալ հերոսի եւ Խանասորի արշաւաճքի հրամանատար Վարդանի կեանքին ու գործունեութեանը:



Յաջորդ օրայ այցելութիւններն սկիզբ առան Ստեփանակերտից: Նախ պատաճերը եղան Զոհրած ազատամարտիկների թանգարանում՝ առաւել տեղեկանալով Արցախեան պատերազմի իրողութեան մասին, ապա փողոցում պատահաբար հանդիպեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանին եւ մտերմիկ գրոյց ունեցան նրա հետ:

Այնուհետեւ Ստեփանակերտի յուշահամալիրում այցելեցին Արթուր Մկրտչեանի եւ մի շարք այլ ազատամարտիկների շիրիմներ: Օրայ միւս բաժինն անցաւ Շուշիում այցելելով Ղազանչեցոց եկեղեցի եւ Պատկերասրահի թանգարան, որից յետոյ խումբը քայլեց դէպի Շուշի բերդը, ապա Զդրութ դաշտավայր՝ Շուշիի ազատագրման հերոսական մարտի մասին մանրամասն

իմանալու նպատակով:



Երեկոյեան նրանք հիւրընկալեցին Հ.Յ. Ստեփանակերտի «Նիկոլ Շուման» կենուրոնում, ուր հանդիպեցին Արցախի Կենտ Կոմիտէի ներկայացուցիչ Դափթա Իշխանեանին, անդամ Ժիրայր Շահիջանեանին եւ ԼՂՀ Աժ Դաշնակցութեան խմբակցութեան անդամ Լեռնիկ Յովհաննիսեանին:



Հանդիպման ընթացքում Դափթա Իշխանեանը մի շարք տեղեկություններ փոխանցեց Արցախի քաղաքական ու տնտեսական կացութեան, ինչու չէ նաև Դաշնակցութեան իրականացրած ծրագրերի եւ ապագայ անելիքների կապակցութեամբ:



Հետաքրքիր էր յատկապէս ընթացքում հիւրերի եւ հիւրընկալների միջեւ ծաւալած մտերմիկ գրոյցը, որ-

տեղ Երիտասարդ միութենականներն իրենց տեսակէտերն ու մտահոգութիւնները յայտնեցին սահմանային լարածովեան, պատերազմի վերսկսման հնարաւարութիւնների եւ որպէս սփիտքահայ հայորդիներ՝ հայրենիքի պաշտպանութեան գործում իրենց ներգրաւման մասին:




Օգոստոսի 1-ը պատանիների համար առաւել յիշարժան դարձաւ զօրանոց կատարած այցելութեամբ: Երեք ժամ տեղողութեամբ սուն այցը նրանց համար պատեհ առիթ հանդիսացաւ հայ զինորդների առօրեային ծանօթանալու եւ միութեան անունից նւէրների կապոցներ փոխանցելու համար: Օրուայ մնացած բաժինն անցաւ Տիգրանակերտում:

Օգոստոսի 2-ին, խումբը մեկնեց Երեւան, իսկ ճանապարհին այցելեց «Ս. Տաթևի» վանք՝ ճոպանուղիով: Օգոստոսի 3-ին, եղան Սարդարապատի յուշահամալիր-թանգարանում, ապա Թալինի բերդում, որից յետոյ շրջագայութիւնը շարունակեց՝ Անի քաղաքի աւերակները եւ Աշնակ գիլուու գտնուղ Գեղրդ Չաւուշի թանգարանը դիտելով:

Ցաջորդ օրը Եռաբլուրում խորհրդաւոր այցը նշանաւորւեց զոհիած մարտիկների հոգիների խաղաղութեան եւ հայ զինորդների առողջութեան համար՝ մատուցում առ Աստիած բարձրացաւած միասնական աղօթքով եւ շիրիմներին ծաղիկների մատուցմամբ.



Ապա Երեւանի քաղաքային գերեզմանոցում իրենց յարգանքի տուրքը մատուցեցին նաև դաշնակցական գործիչներ՝ Արամ Մանուկեանի, Վահան Ցովհաննեանի եւ Հրայր Մարուխեանի յիշատակին, որից յետոյ այցելեցին Հ.Յ. Բիլոյի թանգարան բացատրութիւններ ստանալով՝ յատկապէս Հայաստանի Առաջին Հանրապետութեան կազմաւրման գործում Դաշնակցութեան դերակատրութեան մասին:



Օգոստոսի 5-ին, պատանիները եղան Երեւանի «Թումո» կենտրոնում, յետոյ պայծառ օրը վայելեցին Սեւանայ լիի խաղաղ ափին, իսկ օգոստոսի 6-ին, այցելեցին Ծիծեռնակաբերդ եւ Հ.Յ.Դ. «Արամ Մանուկեան» կենտրոնում հանդիպեցին Հայաստանի պատանեկան միութեան պատասխանատուններին ու մի շարք անդամներին: Ցաջորդ օրը Ապարանում յաճախեցին Բաշ-Ապարանի հերոսամարտի յուշարձան, ապա Դրոյի շիրիմի մօտ հերոսին նիրաւած երգի միասնական կատարմամբ յիշեցին բոլորանիւր գործչի յիշատակը: Նոյն օրը ճամբարախումբն այցելեց նաև Ամբերդ եւ Բիլոյի աստղադիտարան:



Ցատկանշական է, որ պատասխանատունների գեղեցիկ մտայլացմամբ յատուկ դասաւորութեամբ բոլոր այցելութիւնների ընթացքում պատկան վայրի կամ անհատի մասին բացատրութիւնները տրում էին միութենական պատանիների միջոցով, ովքեր նախապէս ուսումնասիրելով իրաքանչիր մանրութ, շանք չէին խնայում իրենց ընկերներին առաւել հետաքրքիր տեղեկութիւններ փոխանցելու հարցում:

Արցախ եղած ժամանակ միութեան անունից գրենական պիտոքներ յանձնեցին Հ.Յ.Դ. Արցախի Կենտ. Կոմիտէի պատասխանատուններին սահմանամերձ որեւէ դպրոցի սաներին նիրելու համար:

Ճանաչողական ճամբարի աշխատանքն աւարտւեց օգոստոսի 8-ին եւ խումբը նոյն օրուայ առաւօտեան ճանապարհիւց դէպի Երան՝ անտարակոյս մեծ տպաւորութիւններով ու հապատութեան խորը զգացումով, ինչը դեռ երկար տարիներ վառ է մնալու ծրագրին մասնակից պատանիների յուշերում:

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԵՄԱԴՐՈՒԹԻՒՆ

Ն. Զ. ՀԱՅ Մ. Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ԾԱՀԻՆԾԱՀՐԻ ՄԱՍՆԱՑԻԴՐՈՒՄ

Հինգաշբթի՝ թականին յուլիսի 14-ի ժամը 19:30-ին, «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահը սովորականից մարդաշատ էր. Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի «Յակոր Պարոնեան» թատերախումբը հանրութեանը ներկայանալու էր Զարեհ Արշակեանի հեղինակած «Ռդմի վաճառականը» և Ռազմիկ Մարկոսեանի՝ «Թողակ» կատակերգութիւնները:

Երեկոյին ներկայ էին Շահինշահրի Հոգեւոր տեսուչ՝ գերա. Տ. Անանիա ծ. Վլր. Գուճամեանը, արժն. Տ. Սահակ քինց. Մինասեանը, Շահինշահրի Հայ համայնքի վարչութեան եւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Կենտրոնական վարչութեան նախագահները, Սպահանի եւ Շահինշահրի հայ համայնքի անդամներ:



Նախ բացման խօսքով հանդէս եկաւ Մարիա Խուդավերդեանը, ով ողջունեց ներկաներին եւ խօսեց թատրոնի դերի եւ դաստիարակչական նշանակութեան մասին եւ ընդգծեց. «Երգիծանքի միջոցով քննադատութեան են ենթարկում մարդկային բնաւորութեան, կեանքի, կենցաղի տարրեր կողմերը, սովորեցում է զերծ մնալ դրանցից, զգուշանալ, չընկնել այնպիսի ծիծաղելի վիճակների մէջ, ինչպիսիք պատկերուած են կատակերգութեան մէջ»:



Ապա ներկայացրեց բեմադրիչ՝ Ռազմիկ Մարկոսեանի թատերական գործունեութիւնը՝ նշելով. «Մեծ սէր ունենալով թատերական արւեստի նկատմամբ՝ 1981 թւականին իր շուրջ համախմբելով հայ համայնքի երիտասարդներին հիմնում է ազատ թատերախումբ եւ

մինչ այժմ շուրջ 25 բեմադրութիւններով, սկզբնական շրջանում յատկապէս Համբարձման եւ Վարդավառի տօներին բացութեայ բեմերից, ներկայացել է Հայրենակիցներին»:

2012 թականից պես. Ռազմիկը համագործակցել է Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան միութեան կամացութեան մէջ վարագույրը եւ «Շառաւատանը» կատակերգութիւնները:

Բացման խօսքով յետոյ հաղորդավարը յայտարարեց ներկայացումների սկիզբը եւ բացւեց բեմի վարագույրը:

Ներկայացումները, որտեղ որպէս դերակատարներ ընդգրկած էին Ռազմիկ Մարկոսեանը, Սար Շառուկեանը, Մանիթա Վարդանեանը, Սիլա Քոնարաքին, Վալենթին Թորոսեանը, Մայսի Մելիքեանը, Ռաֆիկ Վարդանեանը եւ Դերիկ Թահմազեանը, առիթ տուեցին հանդիսատեսին մտորելու եւ վերահմաստաւրելու կեանքի լաւ ու վատ կողմերը եւ լինելով երգիծական բնոյթի՝ ուղեկցեցին ուրախ ծիծաղով եւ աւարտեցին ներկաների բուռն ծափահարութիւնների ներքոյ:

Ապա հաղորդավարի հրաւերով բեմ բարձրացան Շահինշահրի Հոգեւոր տեսուչ՝ գերապատի Տ. Անանիա ծ. Վլր. Գուճամեանը, Ն. Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Կենտրոնական վարչութեան նախագահ՝ Մասիս Մինասեանը եւ Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան «Յակոր Պարոնեան» թատերախմբի անդամները, ինչպէս նաև բեմադրտար՝ Սերինէ Աղախանեանը եւ դիմայարդար՝ Մեղմիկ Խուդավերդեանը՝ գնահատելու եւ շնորհաւորելու նպատակով:

Այնուհետեւ խօսքը փոխանցեց գերապատի Հայր Սուրբին, ով նախ գնահատեց կազմակերպիչներին՝ «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեանը եւ օրաց գեղեցիկ ներկայացումները համարեց համայնքի յաջողութիւնը եւ նշեց. «Շահինշահրի հայ համայնքը այսքան տարի կազմակերպւած եւ լուսաւոր համայնք է եղել եւ ահաւասիկ իր նոր յաջողութիւններով եկաւ ասելու եւ փաստելու, որ Շահին-

շահրի հայ համայնքը միշտ դէպի առաջ նայելով, բարձրանում եւ արձանագրում է նորանոր յաջողութիւններ»: Հայր Սուրբը բարձր գնահատեց բոլոր դերակատարներին, գնահատանքի խօսքեր ուղղեց հանդիսատեսին, ովքեր գիտակցաբար արժեւորում եւ քաջալերում են հայ թատրոնը, մշակոյթը եւ մանաւանդ հայ համայնքը:



Ծարունակելով իր խօսքը Հայր Սուրբը բարձր գնահատեց «Թոշակ» կատակերգութեան հեղինակ եւ բնմադրիչ՝ Շազմիկ Մարկոսեանի աշխատանքը, ընդգծելով. «Մեր առօրեայ կեանքից՝ իրական, ծիծաղելի եւ երբեմն դժբախտ պատկերներ վերցրել էր եւ հրամցրեց մեզ, որպէսզի մէկ անգամ եւս հասկանանք, զգանք եւ մտածենք իրական արժէքների մասին»: Խսկ Զարեհ Արշակեանի հեղինակած «Դոդմի վաճառականը» թատերգութեան մասին նշեց. «Այն գեղեցիկ էր, ծիծաղելի, կտրեց մեր աշխարհից, տարաւ ուրախութեան, երջանկութեան աշխարհ, ջոկեց այս աշխարհի թոհուրուհից եւ ժպիտ պարզեւեց մեզ»: Խօսքի աւարտին գերապատի Հայր Սուրբը կոչ ուղղեց Նոր Զուլայի եւ Շահինշահրի հայ համայնքների անդամներին. «Մի թողէք միութիւնները, այլ գնացէք, զարդացրէք, արդիւնաւորէք, լուսաւորէք, որպէսզի ապրի հայր, հայ երիտասարդը եւ մանա-

ւանդ հայ մշակոյթը եւ հայրենիքը»:

Գերապատի Հայր Սուրբի բովանդակալից խօսքերից յետոյ հաղորդավարը բարի գիշեր մաղթեց բոլորին, իսկ Եղեկաները շնորհաւորելով «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան անդամներին, բեմադրիչն եւ դերասաններին, մեծ բաւականութիւն ստացած լքեցին սրահը:

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութիւնը Երեքշաբթի՝ թւականիս Օգոստոսի 16-ի Երեկոյեան ժամը 19:30-ին կազմակերպել էր հանդիպում մասնաճիւղի «Յակոր Պարոնեան» թատերախմբի անդամների հետ: Երեկոյի սկզբում վարչութեան նախագահ Գետիկ Խաչատրյանը ողջունեց ներկաներին եւ շնորհաւորեց «Դոդմի վաճառական» եւ «Թոշակ» կատակերգութիւնների բեմադրման առիթով, ապա շնորհակալութիւն յայտնելով համագործակցութեան համար՝ բարձր գնահատեց նրանց կատարած աշխատանքը, ցանկանալով առողջութիւն, յաջողութիւն եւ նոր բեմադրութիւններ: Այնուհետեւ ներկաները կիսեցին իրենց տպաւորութիւններով, ինչպէս նաև անդրադարձան դժւարութիւններին եւ առաջացած խնդիրներին: Վերջում կատարեց համեստ հիւրասիրութիւն եւ մասնաճիւղի վարչութեան կողմից յանձնեցին յուշանւերներ:



Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ԾԱՀԻՆԾԱՀՐԻ ՄԱՍՆԱՑԻՒՂՈՒՄ ՏՕՆԻԵՅ ՀԱՅՈՅ ՀԻՆ ԱՄԱՆՈՐԸ ՆԱԽԱՍԱՐԴԼ

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ Երեցական միաւորի նախաձեռնութեամբ օգոստոսի 11-ի ժամը 19:00-ին, «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում կազմակերպւել էր դաշտահանդէս նիդրած Հայոց հին ամանոր՝ Նաւասարդին:



Երեցական միաւորի անունից բացման խօսքով հանդէս եկաւ միութեան գրասենեակի պատասխանառու՝ օրիորդ Մարիա Խուլավերդեանը, ով ողջունելով ներկաներին եւ շնորհաւորելով տօնի առթիւ, ցանկացաւ երշանիկ եւ արեւշատ օրեր, ապա ծանօթացրեց Նաւասարդի ծագման մասին եւ իր խօսքում նշեց. «Հստ

աւանդոյթի Հայկ Նահապետը Հայոց Ձոր գաւառում սպանել է բռնապետ Բէլին՝ ազատութիւն պարզեւելով իր տոհմին ու հետեւորդներին. Այդ յաղթութիւնը տեղի է ունեցել մ.թ.ա. 2492 թւականի օգոստոսի 11-ին: Օգոստոսեան տօնը Հայերը կոչել են Նաւասարդ, որը նշանակում է նոր տարի»: Այնուհետեւ ներկայացրեց թէ Հայաստանի տարբեր վայրերում ինչպէս էին տօնում Նաւասարդը, եւ ինչ աւանդութիւններ կան կապւած տօնի հետ:

Երեցական միաւորի անդամները բացօթեայ բեմը խնամքով զարդարել էին հայկական կարպետներով, կահ-կարասիներով, ձեռքի աշխատանքային գործիքներով՝ ներկայացնելով գիւղական փոքրիկ սենեակ, իսկ Երեցական միաւորի անդամութիւ տիկին Հերմինէ Քոնարաքին հիւրերին ներկայացաւ հայկական տարագով, ստեղծելով գեղեցիկ միջավայր: Երեկոյի ընթացքում սփուտում էր հայկական քաղցրահնչիւն մեղեդի եւ ներկաները վայելում էին աւանդական համեղ կերակրատեսակներ՝ պատրաստած Երեցական միաւորի անդամութիների ձեռքերով: Միաւորը նախատեսել էր նաև վիճակահանութիւն:

Ներկաները հաճելի եւ տպաւորիչ երեկոյ անցկացնելով ժամը 23:00-ին հրաժեշտ տևեցին կազմակերպիչներին:

Ս. ԱՍՏԻԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ԾԱՀԻՆԾԱՀՐՈՒՄ

Կիրակի՝ 2016 թւականի օգոստոսի 14-ի առաւոտեան, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում մատուցեց Ս. Եւ անմահ Պատարագ՝ Ս. Աստածածնի Վերափոխման տօնի առիթով, արժն. Տ. Սահակ քին. Մինասեանի ձեռամբ: Օրոյ խորիրդին ինչպէս միշտ, իրենց առաւ նիդրաւութեամբ ներկայ էին համայնքի բարեպաշտ հայորդիները:



Արժն. Քահանայ Հայոն արարողութիւնից յետոյ հանգամանօրէն անդրադարձաւ Ս. Կոյս Մարիամի ծննդեան, յաւերժ կուսութեան, Աստածամայր ընտրւելու իրողութեան եւ երկինք փոխադրւելու գլխաւոր հանգրւամներին: Քահանայ Հայոն իր քարոզում թւար-

կեց Ս. Կոյսի բարեմասնութիւնները, որոնց շնորհիւ Բարձրեալի կողմից արժանացաւ Աստածամայր լինելու նիդրական փառքին: Այնուհետեւ անդրադառնալով խաղողօրինեքին, ամփոփ կերպով ներկայացրեց հեթանոսական շրջանից ժառանգած աւանդոյթը՝ Ս. Կոյսի Վերափոխման հանգամանքին վերագրւելուն: Եւ այսպէս ճոհսացաւ հայ ժողովորի աւանդական «խաղողօրինեք»ը՝ վերագրւելով այն Ս. Կոյսի Վերափոխման տօնին՝ հանդիսանալով Հայոց Առաքելական Ս. Եկեղեցու չորրորդ տաղաւար տօնը:

Իր քարոզի աւարտին, արժն. Քահանայ Հայոն աղօթելով, որ Աստած բոլորին պարգելի քաջառողջութիւն, յաջողութիւն եւ քրիստոնէական ամուր հաւատք, շնորհաւորեց բոլոր նրանց՝ որոնց անանակոչութեան տօնն էր եւ շնորհակալութիւն յատնեց Շահինշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց միութեան անդամներին, դպրաց դասին եւ բոլոր մասնակիցներին՝ իրենց ներկայութեան համար:

Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ Խաղողօրինեքի արարողութիւնը եւ Շահինշահրի Հայ Կանանց Եկեղեցասիրաց միութեան անդամութիների համագործակցութեամբ ու դասաւորութեամբ օրինած խաղողը բաժանեց ներկաներին:

ՄԻՈՐԵԱՅ ՀԲՈՍԱՆՔ ԱՅԳՈՒՄ

Ծահինշահրի հայ համայնքի Վարչութեան եւ հոգեւոր տեսուչ գերապ. Տ. Անահիա Ծ. վլդ. Գումանեանի կազմակերպութեամբ եւ Ծահինշահրի Հայ կանանց եկեղեցափառաց միութեան համագործակցութեամբ, չորեքշաբթի՝ 2016 թւականի յունիսի 29-ին կազմակերպել էր միօրեայ զբոսանք՝ համայնքի հոգեւոր լսարանի անդամների համար, որին մասնակցեցին շուրջ 70 հոգի՝ ներառեալ արժն. Տ. Սահակ քհն. Մինասեանը:



Մասնակիցները կազմակերպիչների ուղեկցութեամբ, նշանակած օրը առաւօտեան ժամը 8:30-ին, հանրակառքերով շարժեցին դէպի Սպահան քաղաքի շրջակագրում գտնուող մի յարմարաւէտ այգի:

Օրայ առիթով կազմակերպել էր հետաքրքիր զբաղմունքներ եւ մրցոյթներ, որոնց մեջ խանդավառութեամբ մասնակցեցին ներկաները, եւ լաւագոյններն արժանացան մրցանակների:

Միջոցառումն առաւել գեղեցկացաւ, երբ երախտագէտ խումբը՝ գերապ. Հայր Սուրբի ծննդեան տարեդարձը նշելով՝ գեղեցիկ անակնկալ մատուցեց նրան: Գերապ. Հայր Սուրբը փառք տալով Բարձրեալին, իր շնորհակալութիւնը յայտնեց նախ իր ծնողներին՝ իրենց կրած նեղութիւնների եւ ցուցաբերած հոգատարութեան ու խնամքի համար

եւ ապա իր շնորհակալական խօսքն ուղեկցութեամբ մատուցած գեղեցիկ անակնկալի համար, օրինեց նրանց:



Մասնակիցները վայելեցին կազմակերպիչ յանձնախմբի միջոցով պարաւատած համեղ ուտեստները:

Յատկանշելի է, որ սոյն ծրագրի իրականացման իր համագործակցութիւնն էր ցուցաբերել արճ. Վարուժ Մինասեանը:

Խումբը զբոսավայրում զւարճալի պահեր անցկացնելուց յետոյ, երեկոյեան վերադարձաւ տուն:

Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առընչւող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, Համայնքային եւ կրօնական արարողութիւններինը՝ «Ալիք»-ի թղթակիցները, «Արարատ» Սիութեանը՝ Երանուշ Թահմագեանը, Շահնշահրի Հայ Համայնքինը եւ տեղի «Արարատ» Սիութեան մասնաճիւղինը Վիլեթ Յարութիւննեանը եւ Ախղա Մուրադեանը:

Որոշ լուսանկարներ տրամադրում է Գեւիկ Խաչատրեանը:

ՄԵՐ ՀԱՍՏԵԽ
خليفة گري ارامنه اصفهان و جنوب ايران
صندوق پستي ۸۱۷۳۵/۱۱۵
Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjughha.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@yahoo.com

Tel: +98-31-36243471-2
Fax: +98-31-36270999

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ 13 ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՂ ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ «Bricked domes» ԳԻՐՔԸ՝ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԹԵՆԻ ՄԿՐՏՉԵԱՆԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՄԲ

Վերջերս լոյս տեսաւ երիտասարդ ճարտարապետ Թենի Մկրտիչ Խաբազյանի «Bricked domes» խորագրով անգլերէն գիրքը, որը թարգմանաբար նշանակում է աղիսէ գմբեթներ: Գիրքը հրատարակվել է 2016 թւականին, սակայն քանի որ գրառման գործընթացն իրականացրել է 2015-ին, հեղինակն իր աշխատութիւնը նվիրել է Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին:



Գրքում ամփոփիած են բազմաթիւ լուսանկարներ եւ պատկերներ Նոր Զուղայի 13 եկեղեցիներից՝ համապատասխան բացատրութիւններով, որոնցով լուսարձակի տակ են առնել յատկապէս եկեղեցիների շինարարական յատկանիշերը: Հեղինակը նպատակ ունի այս գրքով հայկական մշակոյթը՝ ի մասնաւրի Նոր Զուղայի հարուստ մշակոյթն ու ճարտարապետական կոթողները, առաւել ծանօթացնել ընթերցողներին:

Նախաբանից յետոյ, որտեղ ներառուած են Նոր Զուղայի անցեալը, այս շրջանում հայերի հաստատման պատմութիւնը, ձեռքբերումներն ու եկեղեցիների ճարտարապետական ընդհանուր յատկութիւնները, ներկայացնել են կանգուն 13 եկեղեցիները՝ առանձին գլուխների ներքոյ: Նորաքանչիր եկեղեցու կապակցութեամբ ճարտարապետը բացատրել է կառուցման պատմութիւնը, աշխարհագրական դիրքը եւ շինարարական յատկութիւնները՝ պատկան յատկագծերով ու լուսանկարներով. մի շարք լուսանկարներ կան նաև եկեղեցիների որմնանկարչութիւնների, խորանների սրբապատկերների ու յարակից այլ բաժինների կապակցութեամբ, որոնցով ընթերցողն անգամ եթէ չացելի նշան վայեր, կարող է լայն պատկերացում կազմել Նոր Զուղայի սրբավայր-կոթողների մասին:

Ժիշտ է գրքի բովանդակութեան կազմելու գործում հեղինակի համար հիմք է ծառայել անտառի ճարտարապետ Արմեն Հախնազարեանի «Nor Djulfa» գիրքը, որտեղ նոյնպէս անդրադարձ կայ Նոր Զուղայի եկեղեցիներին, սակայն «Bricked domes»-ն առանձնայատուկ է իր թարմացած տեղեկութիւններով, առաւել մանրամասն բացարութիւններով եւ լուսանկարների հարուստ շտեմարանով: Այս աշխատութեան համար հեղինակն օգտուել է նաև մի շարք այլ աղբիւմներից, որոնց ներկայացրել է գրքի վերջաբանում:

Աշխատանքի իրականացման գործում Թենին վայելել է իր ծնողների, ամուսնու, որը նոյնպէս ճարտարապետ է եւ Զարեհ Թորոսեանի աշխատութիւնն ու հովանաւորութիւնը: Գրքի շասիկը ծեսաւորել է Նա-

րեկ Թորոսեանը, իսկ գրքի լուսանկարների հայաթայթման համար նրան սատարել են Հրայր Բազէ Խաչերեանն ու Թովմա Գալստանեանը:

Երիտասարդ ճարտարապետին առաւել ծանօթանալու նպատակով ստորեւ հակիմ ներկայացնում ենք նրա կենսագրական գծերը:

Թենի Մկրտիչ Խաբազյանը ծննել է 1979 թւականին Նոր Զուղայում: Իր տարրական եւ ուսուցուց կրթութիւնն ստացել է «Արմեն» ու «Քանանեան» հայոց ազգ դպրոցներում, ապա միջնակարգն աւարտել «Սաֆուռա» դպրոցում, որից յետոյ իրանական 1378 թւականին ընդունելով Սպահանի Խորասգան Ազատ համալսարանի Ծարտարապետութեան ճիշում մասնագիտացել է գերիսանի մակարդակով: Թենիի հետաքրքրութեան առանցքն է կազմել հայկական ճարտարապետութիւնը, որի պատճառով էլ նա որպէս գերիսանի աւարտաճառի թեմա ընտրել է Նոր Զուղայի հայկական ճարտարապետութիւնն ու պատմութիւնը՝ «Աղանձնատան» խորագրով: Ցատկանշական է, որ հայկական կոթողների ու ճարտարապետութեան նկատմամբ նրա անսահման սէրն ու ուշադրութիւնը վերադարձում է այն դաստիարակութեանը, որը նա ստացել է իր արւեստական ծնողներից: Նա եօթ տարի է, ինչ որպէս դասական դասաւանդում է Սպահանի Խորասգան Ազատ համալսարանի Ծարտարապետութեան ֆակուլտետի գերդիպլոմի բաժնում: Անդամակցում է Իրանի Ազատ համալսարանների ճարտարապետութեան ճիշի գերդիպլոմի մակարդակի դասաթեմանների գլուխների վերանայման մասնագիտական եօթինգանոց յանձնախմբին, միաժամանակ գործումնելութիւն ծավալելով նաև Խորասգան համալսարանի կողմից կազմակերպած գիտահետազոտական եւ վերատրակաւորման աշխատանոցներում: Թենին որպէս ճարտարապետ, վերահսկի ճարտարապետ, ինչու չէ նաև յատկագծերի գծագրող՝ իր դերակատարութիւնն է ցուցաբերել շինարարական տարբեր նախագծերում:

Նա ունի մէկ դուստր:

ՆԻՒՐԱՏԻՌԱԹԻՆՆԵՐ

Ն.Զ. Հայոց առաքելական եկեղեցեաց վարդութիւն

- 6,649,100 ոհալ արժողութեամբ փախտամած եւ խողովակ-
ներ՝ Հայկազ Պետրոսեան

Ս. Գէորգ եկեղեցի

- 5,000,000 ոհալ. Քեշիշեան ընտանիք
- 1,000,000-ական ոհալ. Համիլէ Համզէի, Աքրամ
- 20 ԱՄՆ դրամ. Սեղան Օշկանեան
- 500,000-ական ոհալ. Գայիանէ Գէորգեան, Սանդրա Խա-
չատրեան, Ազատ Մասհիմ, Ֆաղիիի, ոմն
- 450,000 ոհալ. Ռադմենի
- 370,000 ոհալ. ոմն
- 240,000 ոհալ. Ռոլանդ Համբարչեան
- 200,000 ոհալ. ոմն U. Աստևածածի Վերափոխման տոնին
- 150,000 ոհալ. Անուշ Ղարախսանեան
- 100,000 ոհալ. Ահմադեան
- 70,000 ոհալ. Լյուս Ռաջարի

Խաչ գրյուղու դիմաց

- 500,000 ոհալ. Անուշ Պօղոսեան
- 400,000 ոհալ. Էդարդ Թերմադո
- 200,000 ոհալ. Էդարդ Թերմադո, Մինուշ Մելիքեան
- 100,000 ական ոհալ. Գոհար Եարիշանեան, Աննիկ Ղազա-
րեան, Ային Պետրոսեան

Ս. Յովհաննու եկեղեցի

- 1,000,000 ոհալ. ոմն փոխան դիազարդից օգելու՝ Անդրա-
նիկ Մաթեանի յիշատակին
- 200,000 ոհալ. Մուֆիա Սարուի

Ս. Ներսէս եկեղեցի

- 500,000 ոհալ. Ծաղկուշ Մկրտչեան

Ս. Մինսս եկեղեցի

- 30,000,000 ոհալ. զաւակներ՝ Սալբինազ Գէորգեանի յիշա-
տակին

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի

- 2,000,000 ոհալ. Ծաղկուշ Համբարչեան Վարդան եւ Հրաչ-
յամբարչեաների յիշատակին

Հանգուցեալ Կարօ Խոկանեանի յիշատակին

- 500,000-ական ոհալ. Գրիգորի Աբգար, Սերժիկ եւ Արմինէ Վարդանեաններ, Էմնիկ Պետրոսեան- Վարդանեան
- 300,000 ոհալ. Թելմա Հայրապետեան
- 200,000-ական ոհալ. Մալուս Ցովսէփեան, Ժան Աբգար, Նորայր Թումանեան, Լիդուշ Թէյմուրեան
- 150,000-ական ոհալ. Ասուկ եւ Սանդրա Խուտբախչեան-
ներ, Բագրատ Միմնեան

Հանգուցեալ Թորոս Թորոսեանի յիշատակին

- 150,000-ական ոհալ. Գարբիէլ Թորոսեան, Հայկազ Պետրո-
սեան

- 100,000 ոհալ. Մասիս Քեշիշեան

Հանգուցեալ Արեգնազ Բայաթեան-Ղիասեանի յիշատակին

- 500,000 ոհալ. Մկրտիչ եւ Անիքա Աւետումեաններ
- 200,000 ոհալ. Սերժիկ Ասատրեան
- 150,000-ական ոհալ. Սիրանուշ Շիրանեան, Մասիս եւ Լուիզ Ցովհաննիսեաններ, Կայձակ եւ Դիանա Կարապետեաններ

Հանգուցեալ Աւետիս Բայեկնանի յիշատակին

- 1,000,000-ական ոհալ. Խաժակ Բաղդալեան, Ժորժիկ եւ
Ռոզիկ Աբրահամեաններ

Ն.Զ. Հայ Ա.Մ. «Արարատ» միութիւն

«Ասուպ» նւագախմբի ելոյթի առթիւ

- 5,000,000 ոհալ. Վարուժ Մինասեան
- 1,000,000-ական ոհալ. Ժորժ Ղազարեան, Արմէն Ղար-
խանեան, Ցովիկ Դիլանցեան
- 600,000 ոհալ. Դրո-Սէր Մարտիրոսեան

- 500,000-ական ոհալ. Ադրիան Դավթեան, Համիկ Ալեք-
սանդրեան, Լորեթա Դավթեան, Հայդուկ Կարապետեան
- 300,000-ական ոհալ. Պարթեւ Բարումեան

Երէցների միաւորի 25-ամեակի առթիւ

- 1,000,000-ական ոհալ. Մարզական միաւոր, Սոնիկ Հայրա-
պետեան, Ծաղկուշ Կիրակոսեան, Ժենիկ Մինասեան, Մատիթա
Կարապետեան, Հոփիսիկ Ալյագեան, Այլին Մելիքեան
- 500,000-ական ոհալ. Վամիկ Ալյագեան, Վարդուիի Ղարա-
խանեան, Քարմէն Արթուրեան, Քրիստ Ստեփանեան, Հիլդա
Ծառուկեան, Սանդրա Խաչատրեան, Խեչո Պօղոսեան, Նապիկ
Մելիքեան
- 300,000 ոհալ. Ն.Զ. Հայ Ա.Մ. «Արարատ» միութեան Շա-
հինշահրի մասնաճիւղի Երէցների միաւոր
- 200,000 ոհալ. Ն.Զ. Հայ Ա.Մ. «Արարատ» միութեան Շա-
հինշահրի մասնաճիւղ
- 100,000 ոհալ. Ամի Նոշադեան

Արցախին օծանակող Նոր Չուղայի հիմնադրամ

- 3,000,000 ոհալ. Ցամիկ Դավթեան
- 2,000,000 ոհալ. Սեղա Աւետեան
- 600,000 ոհալ. ոմն

Ն.Զ. Հայ կանանց գրութեան միութիւն (Կարմիր խաչ)

- 5,000,000 ոհալ. Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.-ի թիւ 1 սկաուտական
- 2,200,000 ոհալ. Վարտենիկ Օրօշեան՝ ծնողների յիշատակին
- 1,500,000 ոհալ. Լիդա եւ Սոնա եւ Ալվարդ Զարգարեաններ
- 1,300,000 ոհալ. Ցամիկ Փանոսեան՝ Լեոն Մարկոսեանի յի-
շատակին

- 1,000,000-ական ոհալ. Մանուկ Խաչատրեան, ոմն (2)

- 600,000 ոհալ. Ծերանոցի աշխատատրներ
- 500,000-ական ոհալ. Ալֆրէդ Միրզակեան, Բալասան Դի-
լանչեան, Քրիստինէ եւ Գենիկ Թորոսեաններ, Ծաղկուշ Ամիրխա-
նեան, Արսինէ Ալեքսանդրեան, Հայրապետ Ստեփանեան, Մահ-
մուդիէ

- 300,000 ոհալ. Հրաչ Ղարախսանեան
- 250,000 ոհալ. Զարեհ Ղարախսանեան
- 200,000-ական ոհալ. Սաթենիկ Թորոսեան, Մադի Մովսի-
սեան, Էլնազ Զայէի, ոմն (2)

- 100,000 ոհալ. Շողիկ Քեշիշեան

- Աննամթերք. Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.-ի թիւ 1 սկաուտական, Լո-
րեթա, Ցամիկ Փանոսեան, Վարդանեան, Վարդուշ Ղազարեան,
Սաթ Ծառուկեան, Սանազ, Նադեյի, ոմն

- Ընթիրիք. Սաթենիկ Թորոսեան՝ իր ամուսնու՝ Դավիթ Թորո-
սեանի մահման 10-րդ տարեկիցի առթիւ

Չահիլահրի Հայ համայնքի վարդութիւն

Ս. Աստածածնի վերափոխման տօնի առթիւ

- 1,050,000 ոհալ. Լինա Մովսիսեան՝ խաղողի գնման համար
- 500,000-ական ոհալ. Մելքոն Շիրանեան, Ցովիկաննես եւ
Մատիթա Խուդավերդեաններ՝ Արշամ Խուդավերդեանի եւ Քե-
րոր Սարեանի յիշատակին

- 200,000 ոհալ. Հրաչիկ Ալեքսանդրեան

- 100,000-ական ոհալ. Էմմա Մարկոսեան, Սոնիկ Ցակրեան

Ն.Զ. Հայ Ա.Մ. «Արարատ» միութեան Չահիլահրի մս.

- 3,000,000 ոհալ. Վազրիկ Մարկոսեան
- 2,000,000 ոհալ. Չահինշահրի Հայ համայնքի վարչութիւն
- 500,000 ոհալ. Տ. Սահակ քնն. Մինասեան
- 400,000 ոհալ. Չահինշահրի «Նարօս» երգչախումբ
- 300,000 ոհալ. Չահինշահրի Հայ կանաց եկղոյ. միութիւն
- 300,000 ոհալ. Չահինշահրի «Նարեկ» երգչախումբ
- 300,000 ոհալ. Փերիու կոր. միութեան Չահինշահրի մսն.
- 150,000 ոհալ. Դերիկ Մահմադակեան

